ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

1.1 Դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու կարգավորման անթույլատրելիությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին կարող են ձերբակալել, հարցաքննել, նրա նկատմամբ կիրառել դատավարական հարկադրանքի միջոցներ, ինչպես նաև որպես մեղադրյալ ներգրավել և մեղադրանք առաջադրել՝ սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով:

Դատախազի կողմից հարցաքննություն կատարելու կարգավորումն անընդունելի է ինչպես քրեական դատավարության սուբյեկտների գործառույթների հստակ տարանջատման դոկտրինալ, այնպես էլ ՀՀ դատախազության սահմանադրական կարգավիճակի տեսանկյուններից:

Քրեական դատավարության գիտության մեջ հստակ է, որ քրեական դատավարության սուբյեկտների գործառույթները պետք է հստակ տարանջատված լինեն: Ասվածը վերաբերում է հատկապես քրեական վարույթի հանրային մասնակիցներից՝ դատախազի և քննիչի գործառույթների տարանջատմանը: Դատախազը, որպես հսկողության սուբյեկտ, հետևում է հետաքննության մարմնի և քննիչի՝ ապացույցների հավաքման գործընթացի օրինականությանը: Դատախազը չի կարող իրականացնել քննության գործառույթից բխող բացահայտ կամ լատենտային որևէ լիազորություն: Հակառակ մոտեցումը կհանգեցնի տարբեր պետական մարմինների՝ կրկնվող լիազորությունների առկայությանը և կառաջացնի կոնֆլիկտային իրավիճակներ:

Դեռևս 2007թ.-ին քրեական դատավարության օրենսգրքից հանվել էին դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ դրույթները, սակայն մնացել էր հարցաքննություն կատարելու կարգավորումը:

Նախագծով առաջարկվող «քրեական հետապնդման մարմիններն իրենց լիազորությունների շրջանակներում» ձևակերպումը պայմանավորված է նրանով, որ հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը հանցագործության մեջ կասկածվող անձին ձերբակալելու, հարցաքննելու, նրա նկատմամբ

դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու, որպես մեղադրյալ ներգրավելու և մեղադրանք առաջադրելու լիազորություններն ունեն տարբեր համամասնությամբ, այն էլ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: Հետևաբար, առաջարկվող լուծումը կհանգեցնի դատավարական նորմերի համահունչությանը և ներքին հակասության վերացմանը:

1.2 Դատախազի կողմից նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու միջնորդության կապակցությամբ դատարանի կայացրած որոշման կատարման արդյունքներն նախաքննության մարմին անմիջականորեն ուղարկելը

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ դատախազին իրավունք է վերապահված դիմելու դատարան՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու միջնորդություններով: Իրավակիրառ պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ հետաքննության մարմինները դատախազից ստանալով նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու որոշումը և կատարելով անհրաժեշտ գործողություններ, որոշման կատարման արդյունքներն նախաքննության մարմիններ են ուղարկում դատախազի միջոցով, որի ընթացքում անցնում է բավականին երկար ժամանակահատված: Մինչդեռ, նախաքննության օպերատիվությունն ապահովվելու, տեղեկատվության արտահոսքը բացառելու և անվտանգության նկատառումներով անհրաժեշտ է, որ վերոհիշյալ արդյունքները հետաքննության մարմիններն անմիջականորեն ուղարկեն նախաքննության մարմիններ:

1.3 Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդությունների քննարկմանը քննիչի հայեցողական մասնակցությունը:

Նախագծով կարգավորում են ստանում այդ գործընթացում տեղ գտած կազմակերպահիրավական բնույթ կրող որոշակի խնդիրներ: Մասնավորապես.

Գործող իրավակարգավորման պայմաններում նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդությունների քննարկմանը քննիչի մասնակցությունը բոլոր դեպքերի համար պարտադիր է, սակայն գործնականում հաճախ քննիչի մասնակցության անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ քննիչը միջնորդության մեջ և դրան կցված նյութերում ներկայացրել է միջնորդության բոլոր հնարավոր հիմնավորումները, որի

պայմաններում նիստին նրա մասնակցությունը դառնում է ինքնանպատակ ու **ձևական: Գործող կարգավորումներն** ինչպես դատարանների, այնպես էլ քննիչների համար ստեղծում են ավելորդ ծանրաբեռնվածություն և աշխատանքի կազմակերպումը դարձնում են ոչ արդյունավետ:

Միջնորդության քննարկմանը քննիչի՝ բոլոր դեպքերի համար պարտադիր մասնակցություն նախատեսելն ընդունելի չէ նաև այն տեսանկյունից, որ այս տեսակի միջնորդությունները քննարկվում են մյուս կողմի բացակայության պայմաններում:

Բացի այդ, ՀՀ դատական օրենսգրքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում այս միջնորդությունները քննելու համար առանձնացվել են քրեական մասնագիտացում ունեցող կոնկրետ դատավորներ, որոնք գործում են որոշակի դատարաններում, քննչական գործողություն կատարելու թույլատվություն ստանալու մասին միջնորդությունները դատարան ներկայացնելիս կամ դրանք դատարանում քննարկելիս հաճախ առաջանում են կազմակերպչական բնույթի խնդիրներ, որոնք էապես բացասական են ազդում նախաքննության կազմակերպման ընդհանուր վիճակի և ժամկետների պահպանման վրա: Օրինակ.

Արագածոտնի մարզում նախատեսված են քրեական մասնագիտացում ունեցող 2 դատավորներ, որոնցից մեկը գործում է Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Աշտարակի նստավայրում, իսկ մյուսը' Ապարանի: Թալինի քննչական բաժնում քննվող քրեական գործերով վերոնշյալ միջնորդությունների քննարկման համար քննիչը և ձերբակալված անձը Թալինից կամ կալանքի տակ գտնվող մեղադրյալը համապատասխան քրեակատարողական հիմնարկներից մեկնում կամ տեղափոխվում են Ապարան կամ լավագույն դեպքում Աշտարակ քաղաք, ընդ որում՝ առաջինի դեպքում քննիչն անցնում է շուրջ 100 կմ, իսկ մյուս դեպքում՝ 60 կմ տարածություն: Խնդիրներն առավել են բարդանում, երբ քրեական մասնագիտացում ունեցող դատավորներից մեկը /առավել ևս Աշտարակի տարածքում գործողը/ մեկնում է արձակուրդ կամ հիվանդության կամ այլ պատճառներով տվյալ ժամանակահատվածում չի կարողանում ներկայանալ աշխատանքի, կամ միջնորդությունը ներկայացնելու ժամանակահատվածում ունենում է աշխատանքային ծանրաբեռնվածություն /դատական նիստեր՝ կապված մինչդատական վարույթի ընթացքում ներկայացված միջնորդությունների քննարկման կամ դատաքննության հետ/:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն ունի չորս նստավայր՝ Կապան, Գորիս, Մեղրի և Սիսիան քաղաքներում:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Սիսիան և Մեղրի քաղաքների նստավայրերում քաղաքացիական մասնագիտացման դատավորների կողմից քննվում են միայն քաղաքացիական

գործեր, իսկ Կապան և Գորիս քաղաքների նստավայրերում քաղաքացիական ու քրեական մասնագիտացման դատավորների կողմից քննվում են քրեական և քաղաքացիական գործեր:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն է իրականացվում Գորիս և Կապան քաղաքների նստավայրերում՝ քրեական մասնագիտացման դատավորների կողմից:

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչության Սիսիանի բաժնում և Մեղրիի վարչական տարածքը սպասարկող քննիչի կողմից քննվող քրեական գործերի նախաքննության ընթացքում դատարանի որոշմամբ քննչական գործողությունների անհապաղ կատարման և հարկադրանքի միջոցների անհապաղ կիրառման անհրաժեշտության դեպքում նշված միջնորդությունները քննվում են Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիս կամ Կապան քաղաքների նստավայրերում:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Գորիս քաղաքի նստավայրը Սիսիան քաղաքից գտնվում է շուրջ 45 կմ, իսկ Կապան քաղաքի նստավայրը՝ շուրջ 110 կմ հեռավորության վրա, Կապան քաղաքի նստավայրը Մեղրի քաղաքից գտնվում է շուրջ 70 կմ, իսկ Գորիս քաղաքից՝ շուրջ 135 կմ հեռավորության վրա, որպիսի հանգամանքով պայմանավորված, քրեական գործերի մինչդատական վարույթի ընթացքում դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունների և կիրառվող հարկադրանքի միջոցների անհապաղ կատարման անհրաժեշտության դեպքերում առաջանում են լուրջ խոչընդոտներ:

Հարկ է նշել, որ միջազգային փորձի ուսումնասիրությունները վկայում են, որ մի շարք երկրներում դատարանում *քննչական գործողություններ* կատարելու միջնորդության քննարկմանը միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձի կամ նրա ներկայացուցիչի մասնակցությունը պարտադիր չէ: Այսպես.

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը սահմանում են, որ քննիչը քննչական մարմնի ղեկավարի համաձայնությամբ, իսկ հետաքննիչը՝ դատախազի համաձայնությամբ, միջնորդություն է ներկայացնում դատարան՝ քննչական գործողություններ իրականացնելու վերաբերյալ, ինչի մասին կայացվում է որոշում: Դատական նիստին ***իրավունք*** ունեն մասնակցել դատախազը, քննիչը և հետաքննիչը:

Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնավոր սեփականության, գույքի տիրապետման, անձնական կյանքի անձեռնմխելիությունը սահմանափակող քննչական

գործողությունները իրականացվում են դատարանի որոշման հիման վրա՝ կողմի միջնորդությամբ: Դատարանը ***իրավունք ունի*** միջնորդությունը քննարկել միջնորդությունը ներկայացրած կողմի մասնակցությամբ:

Երևան քաղաքի դատարանի ստեղծմամբ, և մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը բացառապես քրեական մասնագիտացում ունեցող դատավորներին վերապահելու կարգավորման պարագայում խիստ ծանրաբեռնվածություն է առաջացել նաև Երևան քաղաքի դատարանի դատավորների մոտ, իսկ՝ քննիչները և փաստաբանները ժամերով սպասում են իրենց դատական նիստին:

Հաշվի առնելով թե՛ հարցի կազմակերպչական բնույթը, թե՛ այն, որ այլ պետություններ ունեն հայեցողական կարգավորում՝ ներկայացված նախագիծը լուծում է առավել համակարգային խնդիր, որն առաջացել է վերջին ժամանակներում կատարված փոփոխություններով (նաև նոր դատական օրենսգրքի ընդունմամբ):

1.4 Քննիչի կողմից դատարան միջնորդություններ ներկայացնելու դեպքում դատախազին իրազեկելու կարգավորումները:

Գործող օրենքով նախատեսված չէ, որ քննիչի կողմից դատարան միջնորդություն ներկայացնելիս, այդ մասին պետք է իրազեկի նաև հսկող դատախազին: Նման օրենսդրական բացի պայմաններում, դատախազը զրկվում է դատավարական գործողություններ կատարելու թույլտվություն ստանալու նպատակով դատարան ներկայացված միջնորդությունների նկատմամբ հսկողական լիազորությունների, այդ թվում միջնորդությունը հետ վերցնելու լիազորությունն իրականացնելու հնարավորությունից, քանի որ տեղյակ չի լինում նման միջնորդություն ներկայացնելու մասին:

Նախագծով սահմանված է, որ հետաքննության մարմինը, քննիչը միջնորդություն հարուցելու որոշման պատճենն ուղարկում է հսկող դատախազին: Այս կարգավորմամբ իրականացվում է ՀՀ Սահմանադրական դատարանը 2017 թվականի հունիսի 13-ի ՍԴՈ-1373 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը:

Նախագծում նախատեսվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 280-րդ հոդվածում միայն դատարանի կողմից կիրառվող հարկադրանքի միջոց կիրառելու մասին միջնորդություն հարուցելու որոշումը էլեկտրոնային եղանակով ուղարկելու հնարավորությունը, որը հնարավորություն կընձեռի պարզեցված կարգով ներկայացնել այդ որոշումը (պատճեն)՝ հաշվի առնելով, որ այն հրապարակային փաստաթուղթ է և տրամադրվում է կողմերին: Օրինակ, պաշտոնական էլեկտրոնային փոստով գրագրությունը նախատեսված է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածով, ՀՀ վարչական դատավարության

օրենսգրքի 64.1-րդ հոդվածով, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 115–րդ հոդվածի 3–րդ մասով և այլն:

1.5 Քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդության քննարկման կարգը

Եթե քննչական գործողություն կամ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու համար դատարանը չի կարծում, որ միջնորդություն ներկայացրած անձի մասնակցությունը պարտադիր է, ապա նման դեպքերում միջնորդությունը քննարկվում և լուծվում է առանց դատական նիստ հրավիրելու, այլ կերպ ասած՝ միջնորդության քննարկումն իրականացվում է քաղաքացիական դատավարության տերմինաբանությամբ ասած՝ գրավոր ընթացակարգով: Ընդ որում, առանց դատական նիստ անցկացնելու միջնորդությունների քննարկման և որոշումների ընդունման կարգ նախատեսված է գործող ՀՀ քր. դատ. օր–ում՝ դատական քննության նախապատրաստման փուլում (40–րդ գլուխ), որի ընթացքում կայացվում են կարևոր դատավարական որոշումներ՝ առանց դատական նիստի անցկացման:

Միջնորդություններն առանց դատական նիստի քննարկելու վերաբերյալ առաջարկություն ներկայացված է նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից մշակված՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգում[1]:

Նախագծում խուսափել ենք «գրավոր ընթացակարգ» ձևակերպումն օգտագործել, քանի որ այս ձևակերպումը գործող ՀՀ քր. դատ. օր–ի օտար է:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Օրենքի նախագծով առաջարկվում է հստակորեն տարանջատել քրեական դատավարության սուբյեկտների գործառույթները, գործող իրավակարգավորումները համապատասխանեցնելով ՀՀ Սահմանադրությանը, ապահովել նախաքննության օպերատիվությունը: Հետաքննության մարմնին, քննիչին ու դատարանին պարտավորեցնել համապատասխանաբար միջնորդություններ հարուցելու և դրանց վերաբերյալ կայացված որոշումների պատճեներն ուղարկել հսկող դատախազին՝ ապահովելով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության լիարժեք իրականացումը: Հետաքննության մարմինը,

[1] http://court.am/news/21-08-2018/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A5%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3.pdf, էջ 74

քննիչը դատավարական հարկադրանքի միջոց կիրառելու մասին միջնորդություն հարուցելու որոշումը (պատճենը) դատարան և հսկող դատախազին կարող է ուղարկել էլեկտրոնային եղանակով: Ընդ որում, միջնորդությամբ դիմած պաշտոնատար անձը կամ նրա ներկայացուցիչը քննչական գործողություններ կատարելու միջնորդության քննարկմանը մասնակցում է դատարանի պահանջով կամ միջնորդություն ներկայացրած պաշտոնատար անձի նախաձեռնությամբ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Օրենքի նախագծի ընդունման արդյունքում քննչական գործողություններ կատարելու միջնորդություններով դատարան դիմելու վերաբերյալ իրավակարգավորումները կհամապատասխանեցվեն ՀՀ Սահմանադրությանը, միաժամանակ ապահովելով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության լիարժեք իրականացումը: Հնարավորություն կստեղծվի քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունները քննարկել գրավոր ընթացակարգով: